ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի №---Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի №564Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2012 թվականի դեկտեմբերի 27-ի №564Ա որոշմամբ «ԹԱՐԳՄԱՆՉԱՆՑ» արտադրական կոոպերատիվին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1026 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) Կոոպերատիվը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 17.1 հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և դրանք ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի №503Ա որոշմամբ Կոոպերատիվը պարտավորեցվել է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 265 250 (երկու հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր հիսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 5-ի №162Ա որոշմամբ Կոոպերատիվը պարտավորեցվել է 2019 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 423 713 (չորս հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր տասներեք) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Կոոպերատիվը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի 2021 թվականի ապրիլի 22-ի №ՍՆԴ/3120/04/20 վճռով սնանկ է ճանաչվել,

զ) Կոոպերատիվի սնանկության գործով կառավարիչը 2022 թվականի հոկտեմբերի 17-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) Կոոպերատիվի՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2021 թվականի մայիսի 6-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 308 445 (երեք հարյուր ութ հազար չորս հարյուր քառասունհինգ) դրամ, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «ԹԱՐԳՄԱՆՉԱՆՑ» արտադրական կոոպերատիվին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №564Ա որոշումը:
2. Կոոպերատիվին՝ ընդունել ի գիտություն, որ ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2021 թվականի մայիսի 6-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 17-ը հաշվարկված պարտքը կազմում է 308 445 (երեք հարյուր ութ հազար չորս հարյուր քառասունհինգ) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կոոպերատիվին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
-- ------- 2022թ.